

Ինչպես վերականգնել դատական համակարգի նկատմամբ վստահությունը

Մամուլը նույնպես կանգնած է այս խնդրի առջև՝ ինչպես վերականգնել հանրային վստահությունը: Այս առումով երկուսն էլ կարող են միմյանց սատարել, օժանդակել՝ վերգտնելու հանրային վստահությունն այս ինստիտուտների նկատմամբ:

Այս երկրնորանքի լուծմանն ուղղված իմ տեսլականը խարխավում է հետևյալ հիմնական 4 ուղղությունների վրա.

1. Թափանցիկություն և հաշվետվողականություն

1.1 Տեղեկատվության մատչելիություն և հասնելիության հասարակության յուրաքանչյուր անդամի համար հարցումների հիման վրա: Պատշաճ ընթացք պետք է տրվի տեղեկություն ստանալու բոլոր հարցումներին: Տեղեկատվության տրամադրման անհիմն կամ կամայական մերժումները պետք է բացառվեն: ՏՄ օրենսդրությունը պետք է լիարժեք կիրառվի դատական համակարգում:

1.2 **Պրոակտիվ թափանցիկություն** – համակարգը պետք է լինի նախաձեռնող, ոչ թե պասիվ: Այն պետք է ակտիվ դեր ստանձնի ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը հասկանալի եւ մատչելի հանրայնացնելու մեխանիզմների գործարկման հարցում: Դրանք պետք է լինեն արդիական, համալիր ու միասնական ստանդարտին համապատասխան: Պաշտոնական կայքի դերը հսկայական է, որն անհրաժեշտ է բարեփոխել հիմնովին՝ ըստ մշակված չափանիշների: Բաց տվյալների ձուլումը պետք է ապահովվի, որպեսզի հրապարակված տվյալները վերաօգտագործելի լինեն:

1.3 **Ֆինանսական թափանցիկություն և հաշվետվողականություն** -դատարանների գործունեության հաշվետվությունները և ֆինանսական ծախսերը պետք է լինեն թափանցիկ և հասանելի հանրության համար: Դատավորների գույքի եւ եկամուտների հայտարարագրերը պետք է լինեն ճշգրիտ ու թափանցիկ: Շահերի բախումները պետք է նույնպես տեսանելի լինեն հանրության համար:

2. Պատշաճ հաղորդակցություն մամուլի եւ հասարակության հետ

Այս նպատակով առաջանային կարիքներից է ոլորտի համար **հաղորդակցության ռազմավարություն** եւ գործողությունների հստակ պլանի մշակումը, որով կառաջնորդի համակարգը առաջիկա տարիներին կառուցելով հանրության հետ գրագետ ու թիրախային երկխոսություն:

3. Հզորացնել համակարգի մարդկային և տեխնիկական կարողությունները, ընդունել և կիրարկել մի շարք կարեւոր կարգավորումներ, ինչպես օրինակ

սոցիալական մեղիայում աշխատանքի ուղեցույցներ, ավանդական մեղիայի հետ աշխատանքի կանոնակարգեր, որոնք պետք է նշեն, թե ինչ կարող են ակնկալել լրատվամիջոցները դատարաններից և ինչպես պետք է դատարանները բավարարեն լրատվամիջոցների կարիքները դատական գործընթացներից առաջ, ընթացքում և հետո: **Դատական նիստերի առցանց հեռարձակման կարգավորումներ և այլն:**

Այս նպատակով անհրաժեշտ է նաև ձեռավորել դատական խոսնակների ինստիտուտը, ինչը հապաղում է: Հաղորդակցության որակյալ մասնագետների թիվ է անհրաժեշտ պատրաստել:

4. Ապատեղեկատվության դեմ պայքար

Սա ընկած է պետության բոլոր ճյուղերի արդյունավետ գործունեության հիմքում: առանց սրա ցանկացած բարեփոխում դատապարտված է: Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարություն, մեղիագրագիտության կրթական ծագրերի իրականացում համակարգում: